


ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԻ ԱԳՏՆ ՈՒՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Հինգշաբթի, 24 Օգոստոս 2023-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հանդիպում ունեցաւ հայ կաթողիկէ եպիսկոպոսներու պատուիրակութեան հետ, հովուապետական այցելութեամբ Սուրիա ժամանած Տանն Կիլիկիոյ Պատրիարք ԱԳՏՆ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Մինասեանի գլխաւորութեամբ:

Պատուիրակութեան մաս կը կազմէր Նաեւ Բերիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՏՆԱՐ ԱԼ-ԱՍՍՏ ՀՐԱՊԱՐԱԿԵՅ ԸՆԴՔ ՄԸ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐ

Նախորդ օրերուն Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց շարք մը հրամանագրեր:

Արդարեւ, «20» թուակիր հրամանագիրին համաձայն, համալսարանական աշխատանքի պարապող դասախօսներու ամսականներու հատուցումի տոկոսի յաւելում կը կատարուի՝ 200% դրկտորական աստիճան ունեցող դասախօսներուն, 100% համալսարանաւարտ դասախօսներուն: «21» հրամանագիրին համաձայն, Սուրիոյ Պաշտպանութեան, Ներքին Գործոց, Բարձրագոյն Կրթութեան եւ Առողջապահութեան Նախարարութիւններու ելթակայ հիւանդանոցներու մէջ մնայուն եւ հանգստեան կղզուած բժշկներու ամսականներուն 100% յաւելում կը կատարուի: «28» թուակիր հրամանագիրին համաձայն, Սուրիոյ Պաշտպանութեան, Ներքին Գոր-



Շար.՝ Էջ 2 >

ՊԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ՈՒՆԻՆՔ ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ, ՈՐ ԿԸ ԿՈՉՈՒԻ ԼԱԶԻՆԻ ՄԻՉԱՆՅՔ»

Արցախէն ներս որոշակի հարցերու շուրջ տեսակետներու տարբերութիւն կայ, բայց կայ Նաեւ այդ դիրքորոշումները մերձեցնելու փափաք: Այս մասին 30 Օգոստոսին մամուլի ասուլիսի ընթացքին ըսաւ ԶՅԴ Բիւրոյի անդամ, Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի Նախագահ Դաւիթ Իշխանեան:



«Ե՛ւ իմ կողմէ, ե՛ւ՛ խորհրդարանին կողմէ ամէն ջանք ի գործ պիտի դրուի միասնական մըթոլորտ ստեղծելու՝ ե՛ւ՛ քաղաքական, ե՛ւ՛ հասարակական դաշտին մէջ, քանի որ իշխանութիւն-հասարակութիւն յարաբերութիւններու շրջագիծին մէջ գոյութիւն ունի ջրբաժան մը, որ պէտք է վերացնել», պարզաբանեց ան:

Շար.՝ Էջ 3 >

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷ ՈՒՖԱՅԷԼ ԻԱ. ՄԻՆԱՍԵԱՆ ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ ՀԱՆՒՊ ԺԱՄԱՆԵՅ

Բերիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեանի հրաւերով, Հայ Կաթողիկէ Պատրիարք Ամենապատիւ Տէր Ռաֆայէլ ԻԱ. Մինասեան հովուապետական այցելութեամբ, Բերիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Միրիաթեանի հրաւերով ժամանեց Հալէպ:

Պատրիարքի շքախումբին մաս կը կազմէին՝ Բերիոյ Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան, Ճեզիրէի Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ Արիի. Տ. Անդրանիկ Եպս. Այվազեան, Դամասկոսի Կաթողիկէ Հայոց Թեմի Նորանշանակ Առաջնորդ Արիի. Տ. Գեորգ Եպս. Ասատուր-

եան, Եգիպտոսի Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ Արիի. Տ. Օգոստինոս Եպս. Գուսանեան եւ Յունաստանի Կաթողիկէ Հայոց Թեմի Գերյարգելի Յովսէփ Թ. Ծ. Վրդ. Պեգեգեան:

Ընդունելութենէն ետք Հոգեւոր Տէրը ուղղուեցաւ հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցի, ուր տեղի ունեցաւ գոհաբանական աղօթք, ներկայութեամբ Հալէպի հայ եւ քրիստոնէայ հոգեւոր պետերու, ինչպէս Նաեւ Հալէպի Նահանգապետին եւ Պաաս կուսակցութեան քարտուղարին, ներկայացուցիչներուն ու Նահանգային խորհուրդին:

Շար.՝ Էջ 12 >



Տեղական Լրագրող

Խմբագրական

2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒԱԾԸ ՏԱՆՈՒԼ ՉՏԱԼՈՒ ՊԱՅՔԱՐ

2 Սեպտեմբեր 1991-ին հռչակուեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը:

ԼՂՀ անկախութեան հռչակագիրը ամրագրուած էր Լեռնային Ղարաբաղի բնակչութեան կամքով՝ 10 Դեկտեմբեր 1991-ի հանրաքուէով:

Արցախը այսուհետեւ թելակոխեց պետականաշինութեան փուլ:

Հանրաքուէն օրինական էր քանի մը առումներով, նախ այն պատճառով, որ հանրաքուէի որոշումը կը հիմնուէր 3 Ապրիլ 1990-ի ԽՍՀՄ Գերագոյն Խորհուրդի «ԽՍՀՄ կազմէն միութեան կան հանրապետութիւններու դուրս գալու կարգին» մասին օրէնքին վրայ: Այդ օրէնքին առանցքը ԽՍՀՄ կազմէն հանրաքուէով դուրս գալու գաղափարն էր: Օրէնքի երրորդ յօդուածին մէջ կը յիշուէր նաեւ ինքնավար մարզերու մէջ առանձին հանրաքուէ իրականացնելու կարելիութիւնը եւ կարգաւորելու սեփական պետական-իրաւական կարգավիճակի հարցը:

Հանրաքուէն օրինական էր նաեւ որովհետեւ կ'արտայայտէր Արցախի բնակչութեան հայ մեծամասնութեան պահանջը, ինչ որ միջազգայնօրէն ամրագրուած ազգերու ինքնորոշման իրաւունքին արտայայտութիւնն էր:

Այս իրաւական հիմքերը նկատի ունենալով, Ատրպէյճան 44-օրեայ պատերազմին, բռնագրաւելէ ետք Արցախի Հանրապետութեան տարածքին նկատառելի տոկոսը, ամէն ջանք ի գործ կը դնէ Արցախի բնակչութիւնը տեղահան ընելու, որպէսզի հանրաքուէն ու անկախութեան հռչակագիրը կորսնցնեն իրենց իրաւական հիմքերը, իսկ Ատրպէյճան հետագային կարելիութիւն ունենայ Արցախի ժողովրդագրական պատկերը փոխելով իմաստազրկելու անկախութեան հռչակագիրը: Չարմաւալի թող չթուի նաեւ Արցախը ազերիներով եւ այլ ազգի բնակիչներով լեցնելու Ատրպէյճանի հեռանկարը:

Ատրպէյճան քաջատեղեակ է, որ Արցախի Հանրապետութիւնը ունի իրաւական հիմքեր, հիմնուած է ինքնորոշման իրաւունքի միջազգային օրէնքին վրայ: Այս պատճառով է որ շրջափակման, առեւանգումներու, կենցաղային ծանր պայմաններու եւ վախի մթնոլորտ կը ջանայ ստեղծել՝ հայ բնակչութենէն դատարկելու Արցախը, աւելին. Աղտամ-Ստեփանակերտ ճամբան բանալով՝ Ատրպէյճանի ճիրաններուն մէջ առնելու ազատ Արցախը:

Արցախին տիրութիւն ընելու հիմնական միջոցը անոր բնակչութեան հայրենի հողին վրայ գոյատեւելու հիմքերը ամրապնդելն ու անվտանգութեան երաշխիքները Արցախի պաշտպանութեան բանակի հզօրացումով վերահաստատելն է:

Ինչ խօսք, որ կարելի է Ատրպէյճանի անմարդկային վարքագիծը ծառայեցնել «անկախութիւն յանուն փրկութեան» նպատակին ու Արցախի միջազգային ճանաչման աշխատանքին նոր թափ ու երանգ տալ:

2 Սեպտեմբեր 1991-ին Արցախի անկախութեան հռչակումը եւ անոր յաջորդող պետականաշինութեան հսկայ աշխատանքը մեկնակետները պիտի մասն Արցախի պայքարին:

Ցաւօք Հայաստանի Հանրապետութեան վարչապետին Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալու քայլը ծառայեց Ատրպէյճանի նկրտումներու իրականացման, ոչ թէ խաղաղութեան հաստատման:

Արցախի անկախութեան եւ պետականաշինութեան ուղիէն շեղիլը արեամբ ու քաղաքական պայքարով ձեռքբերուած նուաճումները ոտնակոխ դարձնել կը նշանակէ պարզապէս:

Արցախի ժողովուրդը պայքարելու իր վճռակամութիւնը չէ կորսնցուցած: Ազգովին պարտաւոր ենք մեր բոլոր լծակներով սատար կանգնիլ Արցախի ժողովուրդին ու պետականութեան՝ ձախողութեան մատնելու Ատրպէյճանի դաւադրական բոլոր ճիգերը:

«Գ.»

-Երկուշաբթի, 28 Օգոստոսին, գինուորական աղբիւր մը ՍԱՆԱ-ին յայտնեց, որ արշալոյսի ժամը 4:30-ի շուրջ, Իսրայէլ օդային յարձակումով մը



Միջերկրական ծովուն կողմէն, Լաթաքիոյ արեւմուտքէն հրթիռակոծեց Հալէպի Միջազգային օդակայանը, որուն հետեւանքով արձանագրուեցան նիւթական վնասներ: Սուրիոյ Փոխադրութեան Նախարարութեան քաղաքային թռիչքներու հաստատութիւնը յայտարարեց, որ օդայականը ծառայութենէ դուրս եկաւ: Իսկ Չորեքշաբթի առաւօտուն, Սուրիոյ Փոխադրութեան Նախարարութեան քաղաքային թռիչքներու հաստատութիւնը յայտարարեց, որ Հալէպի Միջազգային Օդակայանը նորոգուեցաւ եւ կրկին բանիլ սկսաւ:

- Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հրամանագիր մը հրապարակեց, որուն համաձայն Պասսամ Սապաղ Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար նշանակուեցաւ: Յիշեցք, որ Սապաղ Նիւ Եորքի ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ Հանրապետութեան մնայուն բանազնացի պաշտօնը կը վարէր:



ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ...

Սկիզբ՝ էջ 14

ծոց, Բարձրագոյն Կրթութեան եւ Առողջապահութեան նախարարութիւններու ենթակայ հիւանդանոցներու մէջ մնայուն եւ հանգստեան կոչուած պաշտօնեաներու ամսականներու 50% յաւելում կը կատարուի: «29» թուակիր հրամանագիրին համաձայն, սուրիական օդուղիներու հաստատութեան պաշտօնեաներուն յատուկ 1979-ի «35» թուակիր օրէնսդրական հրամանագիրին 106-րդ յօդուածը փոփոխութեան կ'ենթարկուի: «30» թուակիր հրամանագիրին համաձայն, պետական պաշտօնեաներու ամսականներու տուրքերուն օրէնքը փոփոխութեան կ'ենթարկուի: Փոփոխութիւններուն կարեւորագոյնը ամսականներու տուրքերու տոկոսին նուազումն է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ Վարժարանը 2023-2024 տարեշրջանին համար կարիք ունի՝

- Գիտութեան ուսուցիչի,
- Նախակրթարանի ուսուցիչի,
- Վարորդի,
- Տնտես Մայրիկի:

Դիմողները կրնան դպրոց ներկայանալ ամէն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ 2:00:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական համայնքապատկան նախակրթական եւ երկրորդական վարժարանները 2023-2024 ուսումնական տարեշրջանին համար կարիք ունին.

- Երկու եւ աւելի տարիներու վարչական հմտութիւն ունեցող տնօրէնի եւ տեսուչի,
- Դմուտ եւ համալսարանական վկայագիր ունեցող ուսուցիչներու,
- Տնտես հայրիկի եւ մայրիկի:

Փափաքողները կրնան դիմել Կրթական Խորհուրդի գործավարութեան գրասենեակ:

Լուրեր Հայաշխարհին

ԱՏՐՊԵՃԱՆՅԻՆԵՐ ԲԵՐՉՈՐԻ ՄԻՋԱՆՅՔԻ ԱՆՅԱՎԵՏԻՆ ՎՐԱՅ Կ'ԱՌԵՒԱՆՔԵՆ ԱՐՅԱՆՅԻ ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐՂՆԵՐ

Ատրպեյճանական կողմը Բերձորի միջանցքին մեջ գտնուող ապօրինի անցակետին վրայ երեկ առեւանգած է ռուս խաղաղապահներուն ուղեկցութեամբ Արցախէն Հայաստան մեկնող 22-ամեայ Ալէն Նելսընի Սարգսեանը, կը յայտնէ Արցախի տեղեկատուական շտապը:

Ըստ հաղորդագրութեան, Ալէն Սարգսեանը կը մեկնէր Երեւան՝ ուսումը շարունակելու: Առեւանգման պատճառներուն մասին որեւէ հաւաստի տեղեկութիւն տակաւին յայտնի չէ:

«Ատրպեյճան կը շարունակէ Արցախի ժողովուրդին հանդէպ ցեղասպանական քաղաքականութիւնը՝ անգամ մը եւս խախտելով միջազգային մարդասիրական իրաւունքի կանոնները: Դեպքին վերաբերեալ մանրամասնութիւնները պիտի յայտնուին աւելի ուշ», նշուած է հաղորդագրութեան մէջ:



Ժամեր անց, Արցախի մարդու իրաւունքներու պաշտպանի գրասենեակը հաղորդեց, որ եւս երկու հոգի՝ Վահէ Յովսէփեանը եւ Լեւոն Գրիգորեանը չեն հատած Բերձորի միջանցքին մէջ տեղակայուած ատրպեյճանական անցակետը, սակայն կարելի չէ եղած անոնց հետ կապ հաստատել:

Երեք երիտասարդներն ալ Հայաստանի ուսումնական հաստատութիւններու ուսանողներ են:

Ատրպեյճանական կողմը հաստատած է, որ կալանաւորած ու հարցաքննութեան ենթարկած է երեք երիտասարդները:

Աւելի ուշ Պաքու յայտնեց, որ Ալէն Սարգսեան, Լեւոն Գրիգորեան եւ Վահէ Յովսէփեան տասնօրեայ վարչական կալանքի ենթարկուելէ ետք պիտի վտարուին Ատրպեյճանէն:

Պաքու զանոնք կը մեղադրէ Ատրպեյճանի դոճը իրապարակաւ անարգելու յանցանքով:

28 Օգոստոսին Ստեփանակերտ յայտնեց, որ ատրպեյճանական անցակետէն երեք երիտասարդներ առեւանգուած են: Անոնք Հայաստան կը տեղափոխուին՝ շարունակելու իրենց ուսումը:

Արցախի պետական նախարարի խորհրդական Արտակ Բեգլարեանը «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին հետ գրոյցի ընթացքին անհետեւ օրակէց մեղադրանքը՝ զայն կոչելով ատրպեյճանական հերթական քարոզչութիւն՝ Արցախի ժողովուրդը վախցնելու համար:

ՊԱՔՈՒ «ՄԱՐՊԱՍԻՐԱԿԱՆ» ՕԳՆՈՒԹԻՒՆ ԴՐԿԵՅ ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏ, ՎԵՐՉԻՆԱ ՄԵՐԺԵՅ ԶԱՅՆ

Ատրպեյճանական լրատուամիջոցները յայտնեցին, որ Ատրպեյճանի Կարմիր Մահիկը Պաքուէն Ստեփանակերտ ուղարկած է 2 բեռնակառք:



Լրատուամիջոցները յղում կատարելով Ատրպեյճանի Կարմիր Մահիկի նախագահ, երեսփոխան Նովրուզ Ալլախի, յայտնեցին, որ Ասկերան-Ակնա ճամբով պիտի ուղարկուին 40 թոն ալիւրով բեռնաւորուած բեռնակառքեր:

Ստեփանակերտ մերժեց այս ճանապարհով արաքուած օգնութիւնը:

Ստեփանակերտ Մերժեց Ընդունիլ Աղտամ-Ստեփանակերտ ճամբով Պաքուի Ուղարկելիք 40 թոն ալիւրը:

Հարիւրաւոր արցախցիներ Ակնա (Աղտամ)-Ստեփանակերտ ճանապարհին կանգնեցան ու մերժեցին ատրպեյճանէն դրուած «մարդասիրական» բեռներուն մուտքը Արցախ:

Միւս կողմէ, Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահը մամլոյ ասուլիսի ընթացքին հաստատեց, որ Ստեփանակերտի համար մարդասիրական օգնութեան մէկ ճանապարհ կայ՝ Լաչինի Միջանցքը, որ պէտք է բացուի:

Իշխանեան անընդունելի համարեց նաեւ Ատրպեյճանի կողմէ Միջազգային Կարմիր Խաչի դերակատարութեան չեզոքացման ու զայն Կարմիր Մահիկով փոխարինելու փորձերը:

ՊԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Իշխանեան յայտնեց, որ գոյութիւն ունի սահմանադրական փոփոխութիւններու միասնական փաթեթ, որուն Արցախը կը վերադառնայ աւելի ուշ:

«Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի՝ իմ կողմէ այս պաշտօնը ստանձնելու առաջարկը անմիջապէս չընդունուեցաւ, ներկուսակցական քննարկումներ եղան, այնուհետեւ խորհրդարանէն ներս ներկայացուած բոլոր քաղաքական ուժերուն հետ», ընդօժեց ան:

Խորհրդարանի նախագահը աւելցնելով ըսաւ, որ այս ընթացակարգերէն ետք առաջարկը ընդունուած է՝ բացատրելով, որ առանց քաղաքական համախոհութեան այս որոշումը չէր գոյանար:

Դեմ քուէարկած է միայն «Միասնական Հայրենիք» կուսակցութիւնը, որուն ներկայացուցիչները Իշխանեանի հետ հանդիպումներուն ընթացքին, ըստ վերջինիս, բացատրած են իրենց դիրքորոշումը:

«Իմ թեկնածութիւնը առաջադրեց իշխող ուժը: 44-օրեայ պատերազմէն ետք, Արայիկ Յարութիւնեան յայտարարեց, որ այսօր Արցախի մէջ չի ներկայացնէր իշխող կուսակցութիւնը: Ուստի ան պէտք է բոլոր կուսակցութիւնները յենարան համարէ՝ ըլլան անոնք ընդդիմադիր, թէ իշխանական», եզրափակեց ան:

Դաւիթ Իշխանեան ասուլիսի ընթացքին անդրադարձաւ երեկ Ատրպեյճանի կողմէ Ակնայով «մարդասիրական» բեռ ուղարկելուն եւ յայտարարեց, որ մարդասիրական բեռի համար մէկ ճանապարհ գոյութիւն ունի՝ Լաչինի միջանցքը:

«Եւ այդ միջանցքով անխափան երթելու իրաւունքը պէտք է վերականգնի: Ատիկա ամրագրուած է 9 Նոյեմբերին ստորագրուած փաստաթուղթով: Ինչ կը վերաբերի Ակնա-Ստեփանակերտ ճանապարհի գործարկման ատրպեյճանական թեզին, ատիկա նորութիւն չէ: Ծաբթուան ընթացքին ատրպեյճանական կողմը արեւմտեան գործընկերներուն, ռուսական գործընկերներուն միջոցով փորձած է այդ մտադրութիւնը ներկայացնել եւ իրականութիւն դարձնել:

Ատրպեյճանի երեկուան քայլը մեզի համար հասկնալի է, նախ անընդունելի է: Բաւական քննարկումներ եղած են, մեր հասարակութիւնը պէտք է իրագրել ըլլայ, որ Արցախի իշխանութիւններու քննարկումները յանգել են այն եզրակացութեան, որ այդ ճանապարհի գործարկումը անընդունելի է մեզի համար շարք մը պատճառներով:

Պատճառներէն մեկը այն է, որ մենք ունինք մէկ ճանապարհ՝ Լաչինը, եւ մենք երկրորդ միջանցքի հասկացողութիւն մեզի համար պէտք չէ ամրագրենք: Ատրպեյճան, քաղաքական նպատակներ հետապնդելով, կը փորձէ աշխարհին ցոյց տալ, որ իրենք ներքին հարց ունին եւ Արցախի մարդասիրական ճգնաժամը չի կրնար առընչուիլ արտաքին աշխարհին հետ: Այս հարցը հասած է ՄԱԿ-ի ԱԽ», յայտնեց Իշխանեան:

Գաղտնիք չէ իմ կուսակցութեան վերաբերմունքը Հայաստանի իշխանութիւններուն նկատմամբ, գաղտնիք չէ նաեւ իմ կուսակցութեան վերաբերմունքը մեր պետական հաստատութիւններուն, այս պարագային հարցը պէտք է դիտարկել ԱԶ ԱԺ-ի ներկայացուցիչի Հայաստանի ԱԺ-ին հետ ունենալիք յարաբերութիւններուն մէջ, ասուլիսի ընթացքին, պատասխանելով հարցին, թէ ինչպէ՞ս կը պատկերացնէ իր յարաբերութիւնները հայաստանեան գործընկերոջ հետ՝ ըսաւ Դաւիթ Իշխանեան:

Ան վստահեցուց, որ միշտ ալ կողմ եղած է հաստատութեան կայուն յարաբերութիւններուն:

Ըստ Դաւիթ Իշխանեանի՝ այն յարաբերութիւններու դաշտը, որ հիմա ձեւաւորուած է Արցախի ԱԺ-ի եւ Հայաստանի ԱԺ-ի միջեւ անընդունելի է:

«Անցեալ երկու տարիներուն, միջխորհրդարանական յարաբերութիւններ Արցախի եւ Հայաստանի խորհրդարաններուն միջեւ գրեթէ չկային, բաւարար չէին: Այդ ամենը բաւարար մակարդակի բարձրացնելու համար Ալէն Սիմոնեանի՝ իմ ընտրուելու կապակցութեամբ շնորհաւորանքը առաջին քայլն էր, որ մենք վերականգնենք այդ յարաբերութիւնները: Այդ յարաբերութիւնները անձնական շրջագիծի մէջ պէտք չէ դիտարկել», նկատել տուաւ Իշխանեան:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՄՏԱՀՈԳ Է ՈՒ ՊԱՀԱՆՉԱՏԵՐ ԱՐՅԱՆԻ ԳԾՈՎ» - ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ -

Երեքշաբթի, 29 Օգոստոս 2023-ին, աւելի քան ժամ մը, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Լիբանանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) դեսպան Տորոթի Շիային հետ:

Նորին Սրբութիւնը լայնօրէն անդրադարձաւ Արցախի պարզած ներկայ վիճակին՝ յայտնելով, որ «Արցախի տագնապը սոսկ մարդասիրական տագնապ ըլլալէ անդին իր էութեամբ քաղաքական խնդիր է Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքին առնչուած»: Ապա, Հայրապետը ըսաւ, թէ «Ատրպէյճան մարդասիրական տագնապ ստեղծեց աւելի քան 120.000 ժողովուրդ սուլի մատնելով, որպէսզի կարենայ ինքնորոշման անոր իրաւունքը մոռացութեան դատապարտել՝ կա՛մ Արցախը իր հայ բնակչութենէն պարպելով եւ կա՛մ սուլի ու ցեղային խտրականութեան ենթարկելով անոր հայ բնակչութիւնը»: Գնահատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներուն ցուցաբերած զանազան ձեւի գորակցութիւնը հայ ժողովուրդին, Հայաստանին եւ Արցախին նկատմամբ, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ հայ ժողովուրդը կը սպասէ աւելին: Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ յատկապէս Սփիւռքի հայութեան խոր ընդվզումին եւ զանազան գաղութներէ ներս տեղի ունեցող բողոքի արտայայտութիւններուն:



Դեսպանը մօտէն ծանօթ ըլլալով Արցախի հարցին թէ՛ պատմական եւ թէ՛ քաղաքական երեսներուն, խոստացաւ Վեհափառ Հայրապետին մտածումները եւ սպասումները փոխանցել Ամերիկայի Միացեալ Նահանգներու իշխանութեան:

Հանդիպման ընթացքին նաեւ քննարկուեցին Լիբանանի նախագահական ընտրութիւնը: Այս ծիրէն ներս տեղի ունեցաւ տեղեկութիւններու եւ մօտեցումներու փոխանակում, յատկապէս շուրջ երեք ամիսներ առաջ Նորին Ս. Օծնութեան եւ դեսպանին ունեցած հանդիպումէն ետք կատարուած զարգացումներու լոյսին տակ: Կարեւորութեամբ շեշտուեցաւ անյապաղ ընտրութիւն կատարելու իրամայականը, որպէսզի կարելի ըլլայ պետութիւնը մղել բարեկարգութեան գործընթացքի, յատկապէս ընկերային-տնտեսական մարզէն ներս:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՋ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՍԾ Է ԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԱՆՉԵՐՈՒ ԱՌԵԿԱՆՊՈԽԻՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է Արցախէն Հայաստան տեղափոխուող անձերու առեւանգումին մասին:

Յայտարարութիւնը կը ներկայացնէ ստորեւ.

«Այսօր՝ 28 Օգոստոսին, Լազիսի միջանցքին մէջ տեղադրուած ապօրինի անցակէտին վրայ, Ատրպէյճանի իրաւապահ մարմիններու կողմէն առեւանգուած են Լեռնային Ղարաբաղի բնակիչներ Ալէն Սարգսեան, Վահէ Յովսէփեան եւ Լեւոն Գրիգորեան: Տեղափոխութիւնը նախապէս համաձայնուած էր եւ կ'իրականացուէր ռուսական խաղաղապահ ուժերուն ուղեկցութեամբ, որոնք 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան 6-րդ կէտին համաձայն իրենց վերահսկողութեան տակ պիտի պահէին Լազիսի միջանցքէն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ անխափան կապը: Նշեալ անձերը Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխուած էին՝ շարունակելու իրենց ուսումնառութիւնը:



Ատրպէյճանի այս քայլը, որուն 29 Յուլիսին նախորդած էր Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի կողմէն անյապաղ բժշկական օգնութիւն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխուող 68-ամեայ Վազիֆ Խաչատրեանի առեւանգումը, 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան, ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի՝ իրաւաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումներու կոպտագոյն խախտում է եւ բացայայտ արհամարհանք միջազգային հանրութեան՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի անդամներուն աներկբայ եւ հասցեական կոչերուն:

Տարբեր կեղծ պատրուակներով տեղի ունեցած այս միջադէպերը թոյլ կու տան հիմնաւոր մտավայրութիւն ունենալու, որ Ատրպէյճան անթաքոյց կերպով կը ծրագրէ հաւաքական պատիժի ենթարկել Լեռնային Ղարաբաղի ողջ ժողովուրդը, որ նախորդ դարու 90-ականներուն եւ 2020-ին ստիպուած էր դիմակայել Ատրպէյճանի կողմէն սանձազերծուած լայնածաւալ յարձակումներուն եւ պաշտպանել սեփական հայրենիքի մէջ խաղաղ կենսագործունէութիւն ծաւալելու իր իրաւունքը:

Անկախ տարիքէն, սեռէն, առողջական վիճակէն, Լեռնային Ղարաբաղի անհատները իրենց համար անընդունելի է: Արցախցիները վրաններ տեղադրած են այդ հատուածին մէջ ու հսկողութիւն կը կատարեն: Ատրպէյճանցիները նոյնպէս վրաններ տեղադրած են այն հատուածի հակառակ կողմը: Ատրպէյճան 29 Օգոստոսին այս ցուցադրական քայլը առաւ՝ յայտարարելով, թէ Ադտամ-Ստեփանակերտ ճանապարհով 40 թոն ալիւր կ'ուղարկէ Լեռնային Ղարաբաղ՝ որպէս «մարդասիրական օգնութիւն»:

Շար.՝ 19 5

ՓԱՐԻՉ ԴԱՔՈՒ ԲԱՅԼԵՐԸ ԱՆԲԱՐՈՅ ՆԿԱՏԵՋ. ԴԱՔՈՒ ՀԱԿԱՂԱՐՉԵՋ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Զաթրին Զոլոնա յայտարարեց, որ Պաքու խեղդամահութեան ռազմավարութիւն կը կիրարկէ Արցախի հայերուն նկատմամբ, որպէսզի ստիպէ զանոնք զանգուածաբար արտագաղթել:

Այս մասին Զոլոնա յայտարարեց արտերկրի մէջ՝ Ֆրանսայի դեսպաններու տարեկան համաժողովին ունեցած իր ելոյթի ընթացքին:

«Մենք մեր ուժերը կը լարենք այնպէս, որ պայմաններ ստեղծենք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ արդար եւ կայուն խաղաղութեան համար, սահմանազատուին երկու երկիրներու միջեւ սահմանները, եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին առաջարկուի հոն ապրելու կարելիութիւն՝ ապահովելով իրենց իրաւունքները, մշակոյթը եւ պատմութիւնը», յայտարարեց Զոլոնա՝ աւելցնելով. «Լեռնային Ղարաբաղէն հայերու զանգուածային արտագաղթը իրաւորելու վերաբերող խեղդամահութեան ռազմավարութիւնը անօրինական է եւ, ինչպէս Արդարադատութեան միջազգային դատարանը վճռեց, անիկա նաեւ անբարոյ է»:

Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը չուշացաւ հակազդելու Զոլոնայի յայտարարութիւններուն. նախարարութեան բանբեր Այխան Հաճիգատէ պնդեց, որ անոնք չեն ծառայեր տարածաշրջանի կայունութեան:

Հակադարձելով Զոլոնային՝ Հաճիգատէ դիտել տուաւ, որ Պաքու ջանքեր կը գործադրէ Ղարաբաղի հայերը համարկելու ուղղութեամբ: «Բացարձակապէս սխալ է այդ ջանքերը խոչընդոտել եւ յայտարարել, թէ իբր թէ շրջանէն հայ բնակիչները վտարելու քաղաքականութիւն կը վարենք: Անգամ մը եւս կոչ կ'ուղղենք՝ ֆրանսական կողմին՝ վերջ տալու նման քայլերի եւ սարդիչ յայտարարութիւններու», յայտարարեց Հաճիգատէ:

Նոյն օրը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային զրոյց ունեցաւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ, եւ անոնք անդրադարձան տարածաշրջանին իրադրութեան:

Ըստ Հայաստանի վարչապետի գրասենեակին՝ Փաշինեան ընդօժեց Ատրպէյճանի կողմէ Լազիսի միջանցքի ապօրինի փակման պատճառով Ար-



Շար.՝ 19 5

ՌՈՒՍԻՈՅ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂԱՊԱՆ ՈՒԾԵՐԸ ԱՐԳԵԼԱՊԱՏՆԵՆՆԵՐՈՎ ԵՒ ՓՇԱԼԱՐԵՐՈՎ ՓԱԿՍԾ ԵՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ» ՃԱՆԱՊԱՐՉԸ

Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահները արգելապատնէներով եւ փշալարերով փակած են Ադտամ-Ստեփանակերտ ճանապարհը, որով Ատրպէյճան կը ջանայ իբրեւ թէ «մարդասիրական օգնութիւն» առաքել Լեռնային Ղարաբաղ:

«Արմէնպրէս» կը հաղորդէ, որ համացանցի վրայ տարածուած տեսա-նիւթերէն ի յայտ կու գայ, թէ խաղաղապահները ինչպէս փշալարերով եւ արգելապատնէներով փակած են ճանապարհի այն հատուածը, ուր հասած են կանգնած են այսպէս կոչուած «մարդասիրական օգնութեամբ» ատրպէյճանական բեռնատարները: Ծանապարհը փակած են նաեւ արցախցիները, որոնք շեշտած են, որ ահաբեկչական պետութենէն՝ Ատրպէյճանէն իրենց ոչ մէկ օգնութիւն է պէտք: Անոնք դիտել տուած են, որ այդ ճանապարհի գործարկումը իրենց համար անընդունելի է:



Արցախցիները վրաններ տեղադրած են այն հատուածի հակառակ կողմը: Ատրպէյճան 29 Օգոստոսին այս ցուցադրական քայլը առաւ՝ յայտարարելով, թէ Ադտամ-Ստեփանակերտ ճանապարհով 40 թոն ալիւր կ'ուղարկէ Լեռնային Ղարաբաղ՝ որպէս «մարդասիրական օգնութիւն»:

Շար.՝ 19 5

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԸՆ ԱՅՑԵԼԵՑ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Չորեքշաբթի, 30 Օգոստոս 2023-ի առաւօտուն, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Զայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Միւսասեան Պատրիարք Զայրը, Զալէպ կատարած հովուապետական իր այցելութեան ընթացքին, մասնաւոր այցելութիւն մը տուաւ Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Առաջնորդարան եւ Սրբ. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցի, ընկերակցութեամբ՝ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Զայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեանի, եպիսկոպոս հայրերու եւ քահանայ հայրերու:

Պատրիարք Զայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակուիւնը սիրալիկ կերպով դիմաւորուեցան Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Զրաչ Յակոբեանի, Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան եւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Ժիրայր Ռէիսեանի, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներու, Ազգ. Վարչութեան անդամներու եւ անոր ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեանի, Ազգ. Կրօնական Ժողովի անդամներու եւ անոր ատենապետ Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի եւ Յարաբերական մարմինի ներկայացուցիչ Վրեժ Եագուպեանի, Յարութ Զամիչեանի եւ Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ Միրիան Վարդապետեանի կողմէ: Ընդունելութեան ներկայ գտնուեցան նաեւ Սրբ. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ թաղական խորհուրդը, տիկնանց յանձնախումբը եւ Ազգ. Առաջնորդարանի պաշտօնէութիւնը:



Ազգ. Առաջնորդարանի մուտքին պաշտօնական ընդունելութիւն կատարուեցաւ ծաղկեփունջով եւ աղ ու հացի աւանդական օրհնութեամբ, Զամազգայինի «Սարդարապատ» պարախումբի երկու օրհորդներու տարագարող ներկայութեամբ:

Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Պատրիարք Զայրը նախ այցելելու Սըրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցի, ուր Զոգեւոր Տէրը շրջելով պատմական եկեղեցւոյ օրհնաբեր կամարներուն մէջ, աղօթք բարձրացուց առ Աստուած:

Սրբազան Զայրը ամփոփ կերպով բացատրութիւն տուաւ եկեղեցւոյ պատմականին եւ թանկարժէք սրբապատկերներուն մասին, անդրադառնալով յետ պատերազմին Սուրիոյ Վսեմաշուք Նախագահին նիւթաբարոյական օժանդակութեամբ կատարուած եկեղեցւոյ վերանորոգութեան եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին ձեռամբ եկեղեցւոյ վերօծման:

Այնուհետեւ, Պատրիարք Զայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակուիւնը այցելեցին Ազգ. Առաջնորդարան, ուր Սրբազան Զայրը Բերիոյ Զայոց Թեմի Ժողովուրդին եւ Ժողովականութեան անունով բարի գալուստի խօսք արտասանեց: Ան իր ուրախութիւնը յայտնեց Ամենապատիւ Զոգեւոր Տիրոջ Զալէպ այցելութեան համար, յայտնելով, որ որպէս եկեղեցւոյ պետ իր ներկայութիւնը՝ նոր շունչ եւ ոգի պարգեւեց հալէպահայութեան եւ դժուարին պայմաններուն մէջ յուսադրեց, գօտեպնդեց եւ առաւել գօրացուց Ժողովուրդի գաւակները: Սրբազան Զայրը բարի գալուստ մտղթեց նաեւ Պատրիարք Զոյր ընկերակցող Առաջնորդ Սրբազան Զայրերուն, որոնք ժամանած էին Յունաստանէն, Եգիպտոսէն եւ Լիբանանէն:



Սրբազան Զայրը Թեմին անունով երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնեց Զոգեւոր Տիրոջ եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին եղբայրական ողջոյնները փոխանցեց անոր:

Սրբազան Զայրը աղօթք բարձրացուց առ Աստուած, հայցելով, որ իր հովանիին տակ պա-

հե ու պահպանէ Զոգեւոր Տէրը, առողջութիւն եւ երկար կեանք պարգեւէ անոր, որպէսզի Զրիստոսի խօսքին համաձայն կարողանայ իր ուսերուն դրուած ծանր պարտականութիւնը քաղցրութեամբ յառաջ տանիլ: Մակար Սրբազան խնդրեց Պատրիարք Զոյրմէ, որ իր հեղինակութիւնը բանեցնէ միջազգային շրջանակներու մէջ եւ իր ձայնը բարձրացնէ ի պաշտպանութիւն Սուրիոյ, որպէսզի պատժամիջոցները վերացնեն Սուրիոյ վրայէն եւ Սուրիոյ Ժողովուրդը իր բարօր վիճակին վերադառնայ:

Սրբազան Զայրը, Բերիոյ Զայոց Թեմի Ժողովուրդին եւ Ժողովականութեան անունով որպէս յուշանուէր արծաթեայ հայկական խաչ մը նուիրեց Պատրիարք Զոյր, մաղթելով, որ այնպէս ինչպէս մեր Տէրը Յիսուս Զրիստոս

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԸՆ ԱՅՑԵԼԵՑ ՀՀ ՀԱՎԷՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ

30 Օգոստոս 2023-ի յետմիջօրէին, հովուապետական այցելութեան շրջազիծէն ներս, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Զայոց ՆԱԳՏ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Պատրիարքին գլխաւորած ներկայացուցչական պատուիրակութիւնը այցելեց ԶԶ Զալէպի Գլխաւոր Զիւլպատոսութիւն:



ԶԶ Զալէպի հիւպատոս Բարգէն Պատալեան խորին շնորհակալութիւն յայտնելով այցելութեան համար՝ գայն բնութագրեց որպէս յիշարժան՝ պատմական, որովհետեւ Զալէպի մէջ ԶԶ Գլխաւոր



Զիւլպատոսութեան ներս երբեւիցէ պատիւ չէր ընձեռուած հիւրընկալելու Զայ Կաթողիկէ Եկեղեցւոյ քահանայապետը:

Տանն Կիլիկիոյ ՆԱԳՏ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Պատրիարքը իր խօսքին մէջ յայտնեց, որ Զայ Կաթողիկէ Եկե-

ղեցին Զայաստանի Զանրապետութեան անկախութեան հռչակումէն ի վեր մասնակից դարձած է կարեւորագոյն նախաձեռնութիւններու եւ հաստատակամ է շարունակելու իր արգասաբեր առաքելութիւնը:



Զ ա ն դ ի պ ու մ ի ն միտքեր փոխանակուեցան Զայրենիք-Սփիւռք փոխառնչութիւններու մասին՝ արծարծուեցան երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր:

Քաղուած՝ ԶԶ Զալէպի Գլխաւոր Զիւլպատոսութեան դիմատետրի էջէն:

խաչին զօրութեամբ չարին շղթաները խորտակեց եւ յաղթանակ տարաւ մահուան վրայ, նոյնպէս ան իր կեանքին մէջ խաչին պահպանութեամբ եւ զօրութեամբ կարողանայ յաղթահարել բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւերները եւ Ս. Խաչով յառաջ տանի պատրիարքական իր հոգեւոր կեանքի առաքելութիւնն ու ծառայութիւնը: Սրբազան Զայրը պատուիրակութեան անդամներուն նուիրեց վերջերս հրատարակուած Կիպրիանոս աղօթագիրքէն օրհնակներ:

Այցելութեան ուրախ առիթով, Պատրիարք Զայրը իր սրտի խօսքը արտասանեց: Ան փառք տալով Աստուծոյ իր ուրախութիւնն ու եղբայրական սէրը յայտնեց Սրբազան Զոյր եւ թեմի Ժողովականութեան եւ Ժողովուրդին: Պատրիարք Զայրը մեծապէս գնահատեց Զալէպի համայնքապետներուն միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութեան ոգին, յատկապէս հալէպահայ երեք համայնքապետներուն միջեւ գոյութիւն ունեցող եղբայրասիրութիւնն ու աշխատանքի կորովը, մաղթելով որ առաւել գործակցութեամբ շարունակուի հայ Ժողովուրդի ընդհանրական շահերուն համար տարուող նուիրական աշխատանքը:

Զոգեւոր Տէրը իր խօսքին մէջ յայտնեց, որ հայ Ժողովուրդը իր ողջ պատմութեան ընթացքին բազմաթիւ նեղութիւններ եւ տառապանքներ կրած է, բայց ապագային նկատմամբ ունեցած յոյսով եւ հաւատքի զօրութեամբ կրցած է յաղթահարել բոլոր դժուարութիւնները, ինչպէս Զայոց Տեղասպանութեան տարիներուն, նոյնպէս ներկայիս Աստուծոյ ողորմութեամբ, առաջնորդութեամբ եւ մեր Ժողովուրդի պայքարունակ ոգիով վստահաբար դուրս պիտի գայ ներկայիս տիրող տագնապներէն:

Զոգեւոր Տէրը իր բարեմաղթութիւնները փոխանցելով խաչ մը նուիրեց Սրբազան Զոյր, մաղթելով, որ Ամենակալին օրհնութեամբ եւ պահպանութեամբ շարունակէ իրեն վստահուած առաքելութիւնը:

Աւարտին, Ազգ. Առաջնորդարանի պաշտօնէութիւնը տեսակցելով այցելուններուն հետ, Պատրիարք Զոյր օրհնութիւնը ստացաւ:

ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա.Ա.

Համագգային ընդհանուր շահերու ապահովման եւ երաշխաւորման հոլովոյթին մէջ դերերը բաշխուած պէտք է ըլլան, որպէսզի իւրաքանչիւր բաղկացուցիչ տարր կարենայ իր ներուժը ի սպաս դնել հայ ժողովուրդի համագգային շահերուն եւ տեսլականներուն գործադրութեան նպատակով թափուող ճիգերուն: Առանց դերերու ճիշդ բաշխման՝ Հայաստան - Արցախ - Սփիւռք եռամիասնութիւնը ոչ միայն ամուլ կը մնայ, այլեւ վնասակար գործօնի մը կը վերածուի, որովհետեւ իւրաքանչիւր մաս կը փորձէ իր համոզումներուն եւ շահերուն ի խնդիր գործել, ինչ որ բնականաբար կը նշանակէ, որ հայութիւնը կ'ըլլայ միակ տուժողը:

Եռամիասնութիւնը քաղաքական ճակատ մըն է՝ իր բոլոր հետեւութիւններով, ուր ոչ մէկը ոչ ոքէ կախեալ է, բայց յանձնառութիւն ունի միւս երկուքին հանդէս: Պատասխանատուութիւններ, պարտաւորութիւններ եւ պարտականութիւններ, որոնք մէջ ընդհանուր եւ ճիշդ դերաբաշխմամբ կարելի կ'ըլլայ հաշուի առնել թէ՛ Հայաստանի պետութեան, թէ՛ Արցախի եւ թէ՛ Սփիւռքի շահերն ու իւրայատկութիւնները, առանց գիրար խանգարելու եւ խաչաձեւելու՝ կազմելով այնպիսի ամուր ճակատ մը, որ կ'երաշխաւորէ բոլորին շահերը, բոլորը իրարու հաւասարազօր պարտաւորութիւններու տէր կողմեր համարելով:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՅԱՆ ՍՓԻՒՌՔ



Արցախեան այսօրուան իրավիճակը բաւական է սակայն ցոյց տալու, որ եռամիասնութեան մէջ յառաջացած են ճեղքեր, որոնք կը սպառնան ընդհանուր փլուզման մը, նկատի ունենալով, որ մինչ հայրենի իշխանութիւնները՝ իբրեւ պետութեան լիազօր իշխանութիւնները, թէեւ կը շարունակեն գործել իբրեւ այդպիսին միջազգային եւ շրջանային հարթակներու վրայ, այսօրուան խնդիրներէն թելադրուելու եւ ստեղծուած իրավիճակներէն առաջնորդուելու եւ եռամիասնութեան ճակատին ազդու եւ արդիւնաւետ գործելու ապահովելու ճիգին մէջ թերացած կը թուին ըլլալ: Ամիջապէս պէտք է շեշտել, որ այդ ճիգին պատասխանատուութեան գլխաւոր բաժինը կ'իյնայ Հայաստանի պետութեան իշխանութիւններուն ուսերուն, անկախ այն բանէն, որ ով եւ որոնք են այդ իշխանութիւններուն ներկայացուցիչները:

Սակայն Հայկական Սփիւռքը նաեւ ունի իր մեղքի բաժինը, որուն արդարացման համար կարիքը չկայ տեսութիւններու եւ արուեստական հիմնաւորումներու: Տեղական խնդիրներ, հարցեր եւ տագնապներ պէտք է արգելակիչ տարրեր ըլլան, նկատի ունենալով, որ Արցախ այսօր դեմ յանդիման կը գտնուի սովամահութեամբ ցեղասպանութեան մը գոհ երթալու իրական վտանգին, որ կը սպառնայ ոչ միայն արցախահայութեան, այլ ամբողջ հայութեան բոլոր հատուածներուն, որովհետեւ հայը ուր որ ալ գտնուի, Արցախի դարպասին փլուզմամբ բազմաթիւ տեսանելի եւ անտեսանելի վտանգներու ենթակայ պիտի ըլլայ: Վտանգներ, որոնք կը սարքուին, կը բեմադրուին եւ կը ծրագրուին թուրքատարայեճանական ճակատին կողմէ: Հոս է, որ առաւել կը շեշտուի եռամիասնութեան կարեւորութիւնը, որուն փլուզմամբ ամբողջ հայութիւնը՝ Հայաստանի եւ Արցախի մէջ եւ Սփիւռքի տարածքին, ենթակայ պիտի ըլլայ թրջական-ատրպայեճանական վտանգին: Ասիկա անուրանալի է:

Եռամիասնութիւնը պահպանելու, անոր նոր աւիշ եւ աւիւն սրկելու պարտաւորութեան գլխաւոր եւ մեծ բաժինը ճիշդ է, որ կ'իյնայ Երեւանի իշխանութիւններուն ուսերուն, Սփիւռքը՝ հասկնալով եւ ճիշդ ըմբռնելով Արցախեան տագնապին այսօրուան էջին բոլոր գրառումները, ունի նաեւ իր պարտաւորութիւններուն բաժինը: Այս ծիրին մէջ է, որ Էսկան հարցը կը ծագի: Երեւանի իշխանութիւններուն ներկայացուցիչները պիտի յաջողին թօթափել եւ ձեռքազատիլ եռամիասնութեան վնասող, անոր բաղկացուցիչներուն ներուժը վատնող քաղաքականութիւններէ: Սփիւռքը պիտի յաջողի՞ ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր գերադասել Հայաստանի պետութեան եւ Արցախի ժողովուրդին շահերը, որոնք կապ չունին իշխանութիւններու վրայ գտնուողներու դեմ գործելաձեւի եւ ծրագիրներու հետ: Այս իմաստով ալ պէտք է ընդգծել, որ թէ շարունակեք զիրար մեղադրել եռամիասնութեան դերաբաշխման եւ այս ճակատին ամրապնդման վնասող գործեր կատարելու մեղադրանքներով, միակ տուժողը պիտի ըլլայ հայութիւնը, որ պիտի կորսնցնէ Արցախ միջնաբերդը: Ատկէ անդին հազար ու մէկ հարցադրումներու դուռ բացող գործելաոճերու, փոխադարձ մեղադրանքներու եւ պատասխանատուութիւններու մատնանշումներու ոճը համագգային մեր շահերուն պիտի չծառայէ: Ասիկա պէտք է լաւապէս հասկցուի եւ ըմբռնուի նախ եւ առաջ Երեւանի իշխանութիւններուն կողմէ: Բաւական լայն իմաստով նաեւ՝ Սփիւռքը բաղկացնող հատուածներուն եւ հոսանքներուն կողմէ: Այս ծիրին մէջ Արցախի ուսերուն ինկած պատասխանատուութիւնը եւս ի մտի պէտք է առնուի, որովհետեւ Ստեփանակերտի մէջ հակադիր խմորումներու սակարանը եթէ չփակուի եւ բոլորը Արցախի համար մէկ ու միացեալ ճակատ չկազմեն, տուժողը պիտի ըլլայ ամբողջ հայութիւնը:


ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՏ. NERSES THE GRACIOUS AND CHURCH UNITY (Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ) ԽՈՐԱԳՐԵԱԼ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ կը ծանուցենք, որ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին St. Nerses The Gracious and Church Unity (Ս. Ներսէս Շնորհալի եւ Եկեղեցւոյ Միութիւնը) խորագիրը կրող աշխատասիրութեան վերահրատարակութիւնը լոյս տեսաւ Անթիլիասի Մայրավանքի տպարանէն:

Արդարեւ, 1974 թուականին, սոյն աշխատասիրութիւնը Վեհափառ Հայրապետը, երբ տակաւին վարդապետ էր, իբրեւ ծայրագոյն մագիստրոսի աւարտաճառ ներկայացուցած էր Պէյրութի Ամերիկեան համալսարանին եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական քոլէճին մէջ:

Գիրքին առաջին տպագրութիւնը հրատարակուած է 2010 թուականին: Նկատի ունենալով, որ գիրքը սպառած է եւ ներկայ տարին Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին վախճանման 850 ամեակն է, Նորին Սրբութեան ար-



տուութեամբ, պատմական ու աստուածաբանական իւրայատուկ կարեւորութիւն ունեցող այս գիրքին երկրորդ տպագրութիւնը ահաւասիկ լոյս կը տեսնէ:

Աւելի քան 250 էջերէ բաղկացած Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գիրքը կը բաղկանայ երկու գլխաւոր բաժիններէ: Առաջին բաժինին մէջ ԺԲ դարու Կիլիկեան աշխարհին կրօնական ու պատմական խորքը ներկայացնելէ ետք, հեղինակը լայնօրէն կ'անդրադառնայ Շնորհալի միջ-եկեղեցական յարաբերութեան՝ յոյն եկեղեցւոյ պատրիարքին եւ Բիւզանդիոնի կայսրին հետ եւ ապա՝ անոր աստուածաբանական, դաւանաբանական ու միջ-եկեղեցական տեսակետներուն, ընդգծելով Ս. Ներսէս Շնորհալի ամուր կեցուածքը հայ եկեղեցւոյ ուղղափառութեան նկատմամբ: Իսկ երկրորդ բաժինը կը բաղկանայ յիշեալ միջ-եկեղեցական յարաբերութեան առնչուած դաւանաբանական գիրքերէ, նամակներէ ու փաստաթուղթերէ, որոնք գրաբար թարգմանուած են անգլերէնի հեղինակին կողմէ: Գիրքը ունի նաեւ վերջաբան մը, ուր Վեհափառ Հայրապետը, Ս. Ներսէս Շնորհալի միջ-եկեղեցական ըմբռնումներուն լոյսին տակ, կը շեշտէ հայ եկեղեցւոյ մօտեցումը կարգ մը դաւանաբանական բնոյթ ունեցող խնդիրներուն գծով:

St. Nerses The Gracious and Church Unity խորագրեալ այս գիրքը կարելի է գնել այցելելով Կաթողիկոսարանի գրախանութիւնը կամ կայքէջը՝ www.ciliciabookstore.com:

Առաջնորդութիւն Բերիոյ Հայոց Թեմի

Ուսումնական Խորհուրդ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2023 - 2024 տարեշրջանին համար

- Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագետ ուսուցչուհիներու:
- Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.
- Անգլերէն,
- Արաբերէն,
- Ընկերային Գիտութիւն,
- Համակարգիչ:

Ինչպէս նաեւ հոգեբանական խորհրդատուի:

Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 0932890929-0966463195:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզի այս շաբաթ: Անհրաժեշտ է, որ ձեր առողջության հոգ տանիք:



Ցուլ

Ռոմանթիք յարաբերություններուն ժամանակն է՝ կեանքի ընկեր մը գտնելու համար: Հանգստաւետ վայրի մը մէջ օդափոխութիւն մը պիտի կատարէք եւ կազդուրուի:



Երկուորեակ

Ձեր անկայուն վիճակը հոգեկան ճնշում պիտի յառաջացնէ եւ առողջապահական խնդիրներ պիտի ունենանք: Չգուշացէ՛ք:



Խեցգետին

Հեռաւոր երկրէ բարեկամ մը ձեզ մէ օգնութիւն կ'ակնկալէ: Մի' անտեսէք զայն, այլ փութացէ՛ք օգնութեան ձեռք երկարել անոր:



Առիծ

Չափազանց մտահոգ ու ծանրաբեռնուած էք այս շաբաթ: Ձեր գործատերը պիտի գնահատէ ձեզ ու պիտի երջանկանաք:



Կոյս

Մարդոց գաղտնիքը մի' բացայայտէք: Գաղտնապահութիւնը լաւ բան է: Անակնկալ հիւր մը պիտի ընդունիք այս շաբաթ:



Կշիռք

Մարդիկ ձեր կեցուածքներէն կ'ուզեն օրինակ առնել եւ յաջողիլ: Համեստութեամբ ընդունեցէ՛ք Նոր առաջարկները եւ պիտի բարձրանաք:



Կարիճ

Աշխատանքային օգտաշատ հանդիպում մը պիտի ունենաք այս շաբաթ ձեր գործընկերներուն հետ: Հաճելի անակնկալ մը կը սպասէ ձեզի:



Աղեղնաւոր

Աչք խփեցէ՛ք մարդոց թերութիւններուն, որպէսզի կարենաք յարատեւել ձեր գործին մէջ: Ներողամտութիւնը առաքինութիւն է:



Այծեղջիւր

Վերջապէս ձեր ծայրը լսելի պիտի դառնայ եւ դուք պիտի հասնիք ձեր նպատակին: Համբերեցէ՛ք:



Ջրհոս

Կեանքի ընկեր մը գտնելու համար ձեր թափած ջանքերը պիտի արդիւնաւորուին: Ինճոյքի մը ներկայ ըլլալով պիտի զուարճանաք:



Ձուկ

Եսակեդրոն մի' ըլլաք: Ընկերային շրջանակի մէջ ձեր ինքնութիւնը փաստեցէ՛ք: Աշխատեցէ՛ք եւ պիտի գնահատուիք:



ԶՈՎԱՆԱԿ՝ ՃՇԳԻՏ ՄՆՆԴԱՌՈՒԹԵԱՄԲ

Ամրան տաքէն պաշտպանուելու համար մասնագէտներ խորհուրդ կու տան հետեւիլ քաւի մը կանոններու՝

- 1- կրել բնական կտորէ կարուած, բաց գոյնով, լայն հագուստներ,
 - 2- օգտագործել արեւապաշտպան միջոցներ՝ գլխարկ, հովանոց, ակնոց, արեւապաշտպան քսուկներ,
 - 3- սահմանափակել տան մէջ ելեկտրականութեան եւ կազի օգտագործումը,
 - 4- սնունդին մէջ ներառել թարմ պտուղ եւ բանջարեղէն,
 - 5- խմել մեծ քանակով ջուր եւ այլն:
- Սնունդը որոշիչ դեր ունի այս իմաստով: Ստորեւ կը ներկայացնենք որոշ մթերքներ, զորս նախընտրելի է օգտագործել ամրան տաք եղանակին:

1- Սուրճ

Պէտք չէ չափազանցել սուրճի ու քաֆէին պարունակող այլ ըմպելիներու օգտագործումը,



քանի որ քաֆէինը ունի միզամուղ յատկութիւն եւ կը հեռացնէ ջուրը մեր օրկանիզմէն:

Սուրճի օրական չափաբաժինը 400 միլիկրամ է, որ կարելի է ստանալ՝ 4 բաժակ արեւելեան սուրճ ըմպելով: Յիշենք, որ քաֆէին կը պարունակէն նաեւ թեյը եւ զովացուցիչ շաքար մը ըմպելիներ:

2- Աղ

Ինչպէս քաֆէինը, այնպէս ալ աղը կը նպաստէ օրկանիզմէն ջուրի հեռացման: Հետեւաբար զգուշացէ՛ք աղը չափազանցուած օգտագործելէ:

3- Շաքար

Ամրան տաքուն ծարաւը յագեցնելու լաւագոյն միջոցը ջուրն է, բայց շատեր կը նախընտ-



րեն կազով ըմպելիներ, քաղցր օշարակի տեսակներ խմել: Այս ըմպելիները թէեւ վայրկեանական հաճոյք կը պատճառեն, բայց կարճ ժամանակ անց կրկին ծարաւի զգացողութիւն կը յառաջանայ:


Նկատի ունեցէ՛ք նաեւ, որ ամրան խորհուրդ չի տրուիր օգտագործել շատ կծու, չոր եւ իւղոտ սնունդ:

Հետեւեալ մթերքները կարելի է առատօրէն ներառել ամառային ձեր սնունդին մէջ, որպէսզի ձեր մարմինը ջուրէ չզրկուի, զովութիւն զգաք

եւ առոյգ մնաք.

Վարունգ

Վարունգին գրեթէ 96%-ը ջուր է, կը պարունակէ նաեւ կալիում, մակկիզիում, C եւ K կենսանիւթեր:



Վարունգը դիւրաւ կարելի է օգտագործել շաքար մը աղցաններու մէջ: Իսկ եթէ կ'ուզէք յագեցնել ձեր ծարաւը, հարիչի մէջ դրէք վարունգը, անանուխի տերեւները եւ կիտրոնի հիւթը ու հարելով զանոնք զովացնող ըմպելի մը պատրաստեցէ՛ք:

Ճմերուկ

Ճմերուկը 92%-ով ջուրէ կը բաղկանայ, կը պարունակէ կալիում, մակկիզիում, A եւ C կենսանիւթեր:



Հաճելի է ամրան տաքուն ձմերուկը վայելել հացի եւ պանիրի համադրութեան հետ, ինչպէս նաեւ ձմերուկը քամել եւ հիւթը խմել:

Թթու պտուղներ

Նարինջը, թուրինջը, ինչպէս նաեւ կիտրոնը C կենսանիւթի աղբիւրներ են: Անոնք կը բարձրացնեն օրկանիզմին դիմադրողականութիւնը, կը բա-



րելաւեն մաշկին որակը եւ կը նպաստեն երկար յետեւան:

Ջուրը համեղ դարձնելու լաւագոյն միջոցներէն մէկը անոր քանի մը կաթիլ կիտրոնի հիւթ աւելցնելն է: Իսկ նարինջը կարելի է դարձնել հետաքրքրական աղցաններու գլխաւոր բաղադրիչը:

Մածուն

Ամրան շոգ եղանակը մարսողական հարցերու ալ պատճառ կրնայ դառնալ, յատկապէս երբ մարմինի ջերմաստիճանը կը բարձրանայ:

Այս պարագային օգտագործեցէ՛ք մածունը՝ պարզ կամ քաղցր:

Կանաչեղէն

Նախապատուութիւնը տուէ՛ք հազարին (95% ջուր), լոլիկին (93% ջուր), անանուխին, կանաչ եւ կարմիր պղպեղին եւ կանաչեղէնի այլ տեսակներուն:



Վայելեցէ՛ք ամառը, առողջապահական, համեղ ու թեթեւ սնունդ օգտագործեցէ՛ք եւ զինուցէ՛ք կենսանիւթերու պաշարով:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Ասիոյ ֆութպոլի ակումբներու ամբողջացման փուլին, Զալեայի Ահլին 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Պաղեստինի Շապապ Խալիլը, որուն շնորհիւ յաջողեցաւ իր տեղը գրաւել Ասիոյ աւարտական փուլին:



- Մալիզիոյ մայրաքաղաք Քուալա Լամպուրի մէջ տեղի ունեցաւ Ասիոյ ակումբներու մրցաշարքի վիճակահանումը: Մրցաշարքին մաս պիտի կազմեն Սուրիոյ գոյգ ակումբները, Զալեայի Ահլին եւ Տեր Չօրի Ֆըթուէն: Ահլիի խմբակին մաս կը կազմեն Յորդանանի Ուահատաթ, Իրաքի Զահրապա եւ Քուէյթի ալ-Քուէյթ խումբերը, իսկ Ֆըթուէ կազմին՝ Լիբանանի Ահրտը, Պաղեստինի Շապալը եւ Օմանի ալ-Նահտա խումբերը:

- Սուրիոյ ֆութպոլի Դաշնութիւնը Դամասկոս հրաւիրեց ֆութպոլի ողիմպիական հաւաքականը՝ ուսումնամարզական հաւաք մը կատարելու համար: Զաւաքականի մարզիչութեան պաշտօնը դարձեալ վստահուեցաւ եգիպտացի Թամեր Զասանին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՖԻՖԱ ԴԱԴՐԵՑՈՒՄ ՍՊԱՆԻՈՑ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԸ

Ֆութպոլի Միջազգային Դաշնութիւնը Շաբաթ օր յայտարարեց, որ պաշտօնազուրկ ըրած է Սպանիոյ Ֆութպոլի Դաշնութեան նախագահ Լուիս Բոպիալէսը, աղջկանց համաշխարհային ֆութպոլի մրցաշարքի աւարտին իր ունեցած անպատասխանատու արարքին համար: ՖԻՖԱ հիմնուելով կազմակերպութեան կարգապահական յանձնախումբի գեկոյցին վրայ, որոշեց դադրեցնել Բոպիալէսը միջազգային հարցաքննութեան աւարտը: Որոշումը յայտարարուելէն անմիջապէս տեղ, Սպանիոյ Ֆութպոլի Դաշնութիւնը ժամանակաւոր նախագահ նշանակեց Փետրօ Լոխան:



ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԹԵՐ ՇԹԵՆԿԵՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օր, Սպանիոյ պիտոյեան Պարսելոնայի վարչութիւնը պաշտօնապէս յայտարարեց, որ երկարաձգած է խումբի դարպասապահ Թեր Շթենկենի պայմանագրութիւնը մինչեւ 2028 թուական:



Ըստ յայտարարութեան, Շթենկենի պայմանագրութիւնը խախտելու տուգանք որոշուած է 500 միլիոն եւրօ: Աւելցնենք, որ Պարսելոնայի դարպասապահը քաթալոնեական ակումբին հետ մաս կազմած է 159 մրցումներու, իսկ իր արհեստավարժ մարզական կեանքին ընթացքին անոր դարպասը ստացած է 368 կոլ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 453)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1										■		
2		■				■				■		
3								■			■	
4		■			■		■					
5				■	■					■		
6						■					■	
7							■	■				■
8		■		■		■						
9									■			
10			■	■							■	
11					■				■			
12	■		■									■

Յորիզոնական

- 1- Շորորաքայլ: Մէկը:
- 2- Բաջ: Ձայնանիշ: Զակառակ՝ տարածքի միաւոր:
- 3- Ամուսնացած տղամարդ: Տառի մը անունը:
- 4- Զակառակ՝ 203: Կատակ:
- 5- Շռայլ: Ձայնանիշ:
- 6- Ամբարել: Տիաս խաղող:
- 7- Դողը ջրել: Զակառակ՝ աման շինելու գոյնագոյն հող:
- 8- Խոզկաղին տուող ծառ:
- 9- Թանկագին քար: Տառի մը անունը:
- 10- Անձնական դերանուն: Քնքուշ:
- 11- Քնացի՛ր: Երկբարբառ: Զակառակ՝ գոյութիւն ունին:
- 12- Զակառակ՝ առարկայ: Դոյզն:


Ուղղահայեաց

- 1- Խանասորի արշաւանքին յիսնապետը:
- 2- Զակառակ՝ 1020: Մարիամ Աստուածածնայ մայրը:
- 3- Պատմա-մշակութային տարածք՝ ԶԶ հարաւ-արեւելեան կողմը:
- 4- Թռչուններու խումբ: Զակառակ՝ տառի մը հարեւանները: Եական բայ:
- 5- Վանայ լիճի կղզիներէն: Կոստան Զարեանի վէպը. «Նաւը Կրայ»:
- 6- Իրերայաջորդ տառեր: Զակառակ՝ տարածքի միաւոր:
- 7- Տառի մը անունը: Այրող:
- 8- Բայական լծորդութիւն: Խոնարի: Ժողով:
- 9- Մշուշ:
- 10- Անձնական դերանուն: Արեւելեան իջեան: Տառի մը անունը:
- 11- Յարաբերական դերանուն: Եւս: Ծեփի համար գործածուող գաճաքար: Անձնական դերանուն:
- 12- Տաղանդ: Գոյակ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 452)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	մ	ս	ս	ւ	■	խ	ո	յ	ա	ե	ա	լ
2	ա	■	մ	ի	ա	հ	ա	մ	ն	ւ	ո	
3	բ	ի	բ	■	ժ		մ	ա	ր	■	■	
4	ի	ա	լ		■	ա	ա	ո		■	հ	ւ
5	ա	ւ	բ		■	ա	ո		■	կ	ա	բ
6	մ	ա	բ	ա	ո	դ		■	ք	ե	ո	ի
7	լ		խ	ւ	մ	■	ի		ւ			
8	հ	■	ա	կ	ժ	կ		■	շ	ա		ե
9	ա	ր	կ	■	■	ա	ր	մ	ա	■		
10	ջ	ա	ն	դ	ի	■	■	■	ա	■	■	■
11	ա	ւ		ի	բ	ա		■	շ	ի	բ	ա
12	դ	■	ա	կ	ա	ր	դ		խ	ա	կ	

ԼՈՒՐԻՄ



Մկրտ Էջ 1

ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԸ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՅ ԸԵՂԷՆ ՍԵՅՏԵՅԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ

Երբ գինուած եւ ուղղորդուած անօրինական գինեալ խմբաւորումները ասպատակեցին Յալէպ քաղաքի գրեթէ մեծամասնութիւնը, այդ բարբարոսութենէն անմասն չմնաց նաեւ ճեպլէ Սէյտէն ու յատկապէս ազգապատկան բնակարանային կառոյցը, որուն հոգեւոր հովիւն էր եւ կը մնայ հայրենասէր հոգեւորական, արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւագ Զահանայ Տատաղեան:

2018-ին, Յալէպ քաղաքի ազատագրումով, տեղի ունեցաւ ճեպլէ Սէյտէի ազատագրումը եւս, որուն շնորհիւ հայ կաթողիկէ համայնքապատկան կառոյցը բարերարներու նիւթական օժանդակութեան շնորհիւ կարճ ժամանակուան միջոցին վերականգնուեցաւ:



Յալէպի հայութիւնը վերանորոգման բերկրանքն ու ուրախութիւնը ասպրեցաւ Շաբաթ, 26 Օգոստոս 2023-ի առաւօտեան: Ամեն եւ Գերեջ. Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայոց, Բերիոյ Կաթողիկէ Յայոց Թեմի Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի եւ իրենց ընկերակցող շքախումբին մասնակցութեամբ բացուող կատարեցին Յալէպի ճեպլէ Սէյտէ թաղամասի բնակարանային ծրագրի վերանորոգումը ազգային շէքին, որ կ'ընդգրկէ նաեւ Աւետման մատուռն ու Ախթամար սրահը:



Այս ամենապատիւ Տէրը ուղղուեցաւ դէպի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայոց Աստուծոյ Ծառայ Գարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Պատրիարքի անուան նուիրուած փողոցը, որ Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեանի խնդրանքով քաղաքապետարանի ընդառաջման լոյսին տակ վերանուանուած էր հայոց հայրապետին անունով որպէս յաւիտենականացում անոր յիշատակին:

ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԸ ՀԱԼԵՂԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԵՋ ՆԱՍՏԱԳԱՆԵՅ ԶԱՆԴԻՍԱԽՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայոց Ամենապատիւ եւ Գերեջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Մինասեան Պատրիարքը Յալէպ կատարած հովուապետական իր այցելութեան երրորդ օրը՝ Կիրակի, 27 Օգոստոսին, Յալէպի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ նախագահեց հանդիսաւոր Սուրբ Պատարագին, որուն կը մասնակցէին Բերիոյ Կաթողիկէ Յայոց Թեմի Առաջնորդ Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան, եպիսկոպոս հայրեր, քահանաներ եւ սարկաւազներ:



Պատարագին ներկայ գտնուեցան Յալէպի նահանգապետ Յիւսէյն Տիապի ներկայացուցիչ ճորճ Պախիաշ, պաշտօնական անձնատրութիւններ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Նախքան հանդիսաւոր Ս. Պատարագը, Ս. Երրորդութիւն Եկեղեցի տանող գլխաւոր ճամբուն վրայ տեղի ունեցաւ Ամենապատիւ Զոզեւոր Տիարի պատիւ պաշտօնական ընդունելութիւն մը, ուր բարձրացան ողջոյնի եւ բարի գալուստի պատասխաններ եւ յաղթանակի կամարներ, սկաւառակային շէփորախումբի նուագին ընկերակցութեամբ:

Կիրակի երեկոյեան, Յալէպի Ասորի Կաթողիկէ Աստուածամօր Վերափոխման աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հայր Ներսէս Յովսէփ Թ. Ծ. Վ. Չապարեանի եպիսկոպոսական ձեռնադրութեան Պատարագը: Եպիսկոպոսական ձեռնադրութեան մասնակցեցան Յայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Սիւնհոդոսի գանազան անդամներ, որոնք ժամանած էին տարբեր երկիրներէ, ինչպէս նաեւ շարք մը հոգեւոր հայրեր, քահանաներ ու սարկաւազներ:

ՏԵՐ ՌԱՅԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ՄԻՆԱՍԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԸԻՆ ՁԵՌՈՒՄԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ՅՈՎՍԷՓ Թ. Ծ. Վ. ՉԱՊԱՐԵԱՆԻ

Արարողութեան ներկայ գտնուեցան նաեւ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերջ. Տէր Մակար Սրբ. Եպս. Աշգարեան, հոգեւոր պետեր, Պաղտատի Ասորի Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդ եւ Սիւնհոդոսի անդամ Մար Եուսէֆ ապա արքեպիսկոպոսը, որուն կ'ընկերակցէր պատրիարքութեան ընդհանուր համադրող մոնսիկոր Յապիպ Մրատ, Սուրիոյ մէջ Յայաստանի Յանրապետութեան դեսպան Տիգրան Գեորգեան, ՀՀ Յալէպի Յիւստոսութեան խորհրդակալ Բաբգէն Պատալեան եւ հիւպատոսարանէն պատուիրակութիւն մը, Սուրիոյ խորհրդարանի անդամներ, Յալէպի նահանգային խորհուրդի քարտուղար ճորճ Պախիաշ, նահանգը ներկայացնող պատուիրակութիւն մը, ինչպէս նաեւ կուսակցութիւններու, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ ու հաւատացեալներ:



Արարողութեան ներկայ գտնուեցան նաեւ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերջ. Տէր Մակար Սրբ. Եպս. Աշգարեան, հոգեւոր պետեր, Պաղտատի Ասորի Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդ եւ Սիւնհոդոսի անդամ Մար Եուսէֆ ապա արքեպիսկոպոսը, որուն կ'ընկերակցէր պատրիարքութեան ընդհանուր համադրող մոնսիկոր Յապիպ Մրատ, Սուրիոյ մէջ Յայաստանի Յանրապետութեան դեսպան Տիգրան Գեորգեան, ՀՀ Յալէպի Յիւստոսութեան խորհրդակալ Բաբգէն Պատալեան եւ հիւպատոսարանէն պատուիրակութիւն մը, Սուրիոյ խորհրդարանի անդամներ, Յալէպի նահանգային խորհուրդի քարտուղար ճորճ Պախիաշ, նահանգը ներկայացնող պատուիրակութիւն մը, ինչպէս նաեւ կուսակցութիւններու, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ ու հաւատացեալներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի, 28 Օգոստոսին Ամենապատիւ Տէրը ընդունեց այցելութիւնը Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդին, Յալէպի քրիստոնեայ եւ իսլամ հոգեւոր պետերուն, ՀՀ Յիւստոսարանի խորհրդակալին, հալէպահայ կազմակերպութիւններուն, Յալէպի նահանգապետին եւ նահանգային խորհուրդի պատուիրակութեան, Սուրիոյ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, Պաաս կուսակցութեան Յալէպի քարտուղարին, ապահովական գրասենեակի ներկայացուցիչներուն, Յալէպի Մուֆթիին, Կրօնական կալուածներու տնօրէնին, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններուն, իսկ Չորեքշաբթի օրը, Պատրիարք Տէրը ներկայացուցչական պատուիրակութեամբ փոխադարձ այցելութիւններ տուաւ բոլորին:



Յալէպի նահանգապետ Յիւսէյն Տիապի ներկայացուցիչ ճորճ Պախիաշ, պաշտօնական անձնատրութիւններ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը: